



ԵՐԿ-ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

TO ADVERTISERS.

This paper has an extensive circulation among the Armenians throughout the United States and the principal cities of the world. It is an excellent medium for domestic and international advertisements, securing the very best results.

Rates of advertising will be found on the fourth page.

— ՄԵՐ ՍԿԶՐՈՒՆԲԸ ԱԶԳԻՆ ՍԿԶՐՈՒՆԲՆ Է, ՄԵՐ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ — ԱՐԱՐԱՏ, Սեպտեմբեր 30, 1876 —

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆՒՆՈՒՊՈԼԻՍ
ESTABLISHED AT CONSTANTINOPLE 1869.

ՆՈՒՆ ԵՐԿ, ՀԻՆԳՇԱԹԻ, ՓԵՏՐՎԱՐ՝ 26
NEW YORK, THURSDAY, 1891.

ՆԱՐ ՀԱՏՈՐ Ա. ԹԻԻ
NEW VOLUME I NO. 5

ԱԶԳ

Եկեղեցական եւ գործունեական
գործերու վերաբերեալ Հայերէն լեզու
ուսումնական, որք երկու մասնա-
նախափէ աւելի տեղ չեն բռներ,
Թերթիս մէջ ձրի պիտի հրատարակ-
ուին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

ՈՒ ՂԱՂԱՔԱՆ ՄԲ. ԵԿԵՂԵՑԻ

St. Chrysostom's Chapel,
[Trinity Parish.]
Corner 39th Street and 7th Avenue.

Ի գլխաւ թիւն բարեպաշտ ժողով-
րէան կը ծանուցուի որ առաւօտ-
եան ժամերգութիւն կը կատարուի ի
վերոյիշեալ Մատրան, ամէն Կիրակի
ժամը 1.30 ին յետ միջառուր:

Ի Դիմաց Հոգաբարձութեան,
Հ. ԵԿԻՆԵԱՆ, Փ Մ. ԱՅՎԱԴ, Ս.
Բարտուղար: Առաւօտեան:

ԱԶԳ

Նիւո Եօրքի Հայաստանեայց Եկեղեցւոյ
Հոգաբարձութիւնն պատիւ
ունի ծանուցանել արդոյ Հասարա-
կութեան, որ Եկեղեցական երաժշ-
տութեան վարժութիւնը տեղի կու-
նենան ամէն Հինգշաբթի գիշեր թ.
ժամ 7.30, Ս. Ոսկերեան Մատ-
րան սրահին մէջ, Ուէսթ 39րդ
Փողոցի և 7րդ Ավելիի անկիւն:
Սրահին դուռը 7րդ Ավելիի վրայ
է: Ամէն ազգայինը սիրով կը հրա-
ւիրուին ներկայ գտնուիլ:

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ
Ի ՆՈՒՆ ԵՐԿ.

Ընթերցող,

ՀՐԱՆՏ ՄԵՍՐՈՊ ԳԻՐԷՉՅԱՆ.

Յառաջիկայ Կիրակի, թ. ժամ 2.30
յետ միջառուր, ի Կրկն Մատրան
(Պրոտուէյ և Տասներորդ փողոց)
կրօնական Պաշտամունք պիտի կա-
տարուի Հայ Եկեղեցւոյ, ըստ գրու-
թեան Անգղիական Եկեղեցւոյն:

Յարգանքով կը հրաւիրուին ամէն
Հայ ներկայ գտնուիլ և մասնակ-
ցիլ տոյն Պաշտամունք:

ՆԵՒՏՈՆ ՄԵՍՐՈՊ ՊՈՅԱԶԵԱՆ
Բարտուղար:

ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ

ԱՆԳՂ. ԴԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

ՅՆՎԻՖԷՆԻ ԵԿԵՂԵՑՈՎ.

47րդ Փողոց, Լէքսինթըն եւ
Բարձր Ավելիի անկիւն:

Պաշտօնեայ — Ար. Յովհաննէսեան.
Դասախօսութիւնն կսկսի յետ մի-
ջառուր, ժամը 3ին, եւ կրօնական
Պաշտամունքն՝ ժամը չորսին,
Կիրակի օրեր:

ԿՍԿԾԱՆՔ

Գրեց

Հ. ԵԿԻՆԵԱՆ.

Հեղինակին ընտիր մէկ բանաս-
տեղծութիւնն է այս արձակ գրու-
ած, որ կը վաճառուի խմբագրու-
թեան քով հատը 3 անգամ:

ՀԱՅ ԵՐ Ի ՖԻԼԱՏԷԼՅԻԱ.

Ֆիլատելիա. Փետր, 24. 81.

Խմբագիր.

Յ. Լաւրով թէ Հիւրիկայի
պատիւը պիտի ընէ, ձեր ազգագրու-
մարմինը մէջ տեղ ունի առաջին
երախայրին հետագան. կը խրկեմք
հրատարակութիւն:

Տեղւոյ ազգայինը թէ պէտ թու-
ով քիչ, սակայն միշտ ազգային
ընտիր զգացում ցուցուցած են: 89,
նոյ 2ին Կիրակի օր ազգայնոյ մի
անհնակ ժողովուրդ. 11 անգ Բազ-
կայեալ ընկերութիւն մը կազմե-
ցինք իրեն օթեակ Հ. Հ. Միւսթեան.
Պ. Յ. Օղանեան Գանձապետ և Կ. Է-
ֆէնտեան Գրագիր, մի տարւոյս
պաշտօնով, իսկ Ատենապետ ամէն
ամսոյ առաջին Կիրակիին որ և է
օրովոյ օր նոր ընտրելի: Մէկ տա-
րի ազգայնոց անհնակներուն մէջ
Միւսթիւն շարունակեց իւր կանո-
նաւոր ժողովներ: Տարւոյ վերջին
միւսթիւն հաւանութեամբ Մօրնիկ
Սթար Հօլը վարժուեցաւ իրեն ժո-
ղովարան Միւսթեան, և 6-12 Ամ-
սոյ համար Պ. Կ. Էֆէնտեան Ատե-
նապետ Պ. Գ. Սիրապետ Ատենա-
պետ և Պ. Յ. Համբարձումեան

Գանձապետ ընտրուեցան: Նախկին
Գանձապետ Պ. Յ. Օղանեան իւր
հաշուեցուցակը ներկայեց և ըստ
տրամադրութեան կանոնագրի մի-
աձայն հաւանութեամբ յանձնա-
րարուեցաւ իրեն որ Պ. Մ. Փորթու-
գալեանի զրկէ այն անդամոց չա-
շարականներէն գոյացած հասոյ-
թը որ և խրկելով պատասխանը ևս
ընդունած է:

Տեղւոյ ազգայնոց թիւը մէկ
ու կէս տարւոյ մէջ կրկնապատկուե-
լով 75ին հասած է. ընկերութեան
անդամոց թիւոյն եռապատկէն ևս
աւելի, որ քաջաբերէ է: Մէն
մի անգամ եթէ այլ և ալ պատ-
ճառներով չընդունիր Արարատ, Ար-
մէնիա և կամ Հայք. գէթ կը կար-
գայ ունէ միջոցաւ և կը տեղեկանայ
բոլոր Հրատարակութեանը:

Արթ. Հ. Սարաճեան առաջին
անգամ ըլլալով Ամսոյ 13ին անա-
կրկնալ տեղս այցելեց, որ ազգա-
յինը ըստ կարի լաւ ընդունելու-
թիւն ըրին: Եւ պաշտօնապէս բո-
լոր ազգայնոց հրաւէր զաւ ամսոյս
13ին ժողով գումարել ի Մօրնիկ
Սթար Հօլ, որ և 32 ազգայնոց ներ-
կայութեամբ մի պատկառելի և հա-
ճելի ժողով ունեցանք:

Պ. Ատենապետ ժողովս բացուե-
ցաւ առօթքէ եւ ազգային երգէնյե-
տոյ Արթ. Հ. Սարաճեան իւր բնական
և հաճելի ձեւով յորդոր եւ քաջաբ-
կարգաց, մասնաւորապէս գաղթա-
կանութեան լաւ գիրք մը տալու հա-
մար ինչ ինչ թեւադրութիւններ ը-
րաւ, (որոյ ընդարձակութիւնը տես-
նուեցաւ ԱՐԱՐԱՏ ի չորրորդ թիւոյն
մէջ.) և Ուսթըրի նորակառոյց
Եկեղեցւոյ համառօտ պատմու-
թեամբ վերջացուց: Ժողովս ծափա-
հարութեամբ և յոռակաց ու ձեռ-
նամբարձ շնորհակալութիւն եւ խն-
դակցութիւն յայտնեցին Նորին Ար-
ժանապատուութեան: Նաև մի քանի
ազգայինը ընտիր ուղղործներ մա-
տուցին:

Ըստ թեւադրութեան Արթ. Հ.
Սարաճեանի, Պ. Ատենապետի և
գրագիր բարդուեցան 3 արժանաւոր
անձինքներ ևս իւր յանձնարումը
գաղթականաց վիճակին վրայ խոր-
հելու Նիւ Եօրքի Պատուարժան
Յանձնարումին հետ գործակցելու
եւ Միւսթեան տեղեկագրելու որք
են. Տօք. Յ. Արշակունի, Գ. Բէ-
պապեան, Մ. Տ. Խաչատուրեան.
Պրնք. Յ. Օղանեան և Կ. Թաշճեան:

Ուսթըրի Եկեղեցւոյ համար
նախապէս հանգանակութիւն մը
բացուելով 70 թաւրի շափ ժողոված
էր, բայց Հ. Սարաճեանի գաղովը
այդ թիւ 102 թաւրէ հասաւ:

Տեղւոյ ազգայնոց մեծամաս-
նութիւնը թէ պէտ գործաւոր դասը
կը կազմեն բայց գիտեն ի հարկին
իւրեանց քաջակերու բերանները
բանալ, որք 2-5 անգամներ թողաւ-
տէ բռնուած երկտարաբայաց ամ-
բող ծախքը հոգալով հայրենիք և
կամ Գալիֆօրնիա զրկած: Արմէնիոյ
30 թաւրի շափ ուղղած և ահա
Ուսթըրի Եկեղեցւոյ ևս 102 թաւր
հանգանակուած է, որ իւր քաջա-
բերական է, որով մեծ յոյսեր կը
տածեմք տեղւոյս փոքրիկ գաղթա-
կանութեան վրայ:

Կ. Էֆէնտեան:

ՀԱՅ ԵՐ Ի ԿՍԿԱԾԱ.

Լօստօնի Արմէնիա է կը տեղե-
կանումք թէ Կալիֆօրնիա Հայք Դեկ-
25ին մի միթինիկ հրաւիրած են Բրի-
տանական Բարլամէնթի անդամ Մր-
Դ. Է. Շուան, որ Հնդկաստանի մէջ
ճամբորդելու վրայ էր: Մի ուղղործ
կարգացուած է տեղւոյն գաղթա-
կանութեան կողմանէ, որու մէջ
արտայայտուած են մեր Կալիֆօրնի-
անց ազգայնոցը Հայաստանի
մէջ իրաց թշուառ վիճակին և դո-
րա բարւոքման համար Մր. Շուան
և ընկերաց ըրած մարդասիրական
ջանքն անհամար: Մր. Շուան ի
պատասխանի տոյն ուղղործին իւր
շնորհակալութիւնն յայտնելով եղած
ընդունելութեան, շարունակած է:
«Ձեր աշխիւ խօսքերը իմ վրաս
խորին տպաւորութիւն մը ըրին,
բայց կըզամ որ դուք շատ կը չա-
փաղանցեն այն դոյնդն ծառայու-
թիւնները զորս կարողացած եմ
ընել տառապեալ Հայոց դատին
համար: Ես միայն տասն և մէկե-
րորդ ժամուն սկսայ գործել այդ-
ւոյն մէջ, վասնորոյ կ'ընդունիմ
ձեր շնորհակալութիւնները չէ թէ
ինձ համար, այլ յանուն մեր մեծն
առաջնորդ Մր. Կլաւտիլի և հա-
տարակաց Խորհրդարանի մէջ իմ
աշխատակցացս Մր. ձէյմ Պրայսի,
Մր. Լէվիզըն Կաուըրի, Մր. Չա-
նիկի, Մր. Ու. Սըմըրսի և ուրիշ-
ներու որք օրուն ջերմութիւնն
և բեռը տարին որչափ որ Բարլա-
մէնթի մէջ գործեն կերթայ, և
Տէյլի Նիւուզի իւր հիմնադր հետա-
քաց և նախաջողութեան հա-
մար: »

Աստ մեծայարգ այցելուն Հայ-
կական խնդրոյն և տառապեալ Հա-
յաստանի վիճակին վրայ քաջա-
հաշարեալ:

մուտ տեսութիւն մը ընելէ ետք
յաւելցուցած է: « Կը յուսամ և կը
հաւատամ որ ձեր տառապեալ ազ-
գին պայծառագոյն օրերուն արշա-
լոյսը պիտի տեսնեմք: Վստահ եմ
որ պիտի ներէք ինձ, իւր Հայաս-
տանի անկեղծ և փորձեալ բարե-
կամ մը, ըսելու թէ շատ ինչ կա-
խում պիտի ունենայ Հայոց գոր-
ծօն հայրենասիրութենէն, ի ներ-
քուստ ըլլալ թէ յարտաքուստ, և
իրենց անձնազոհութեան կարողու-
թենէն: Իմ միակ ցաւս է այժմ որ
Հնդկաստանի մէջ գտնուելով պա-
կաս մնացած եմ Հայոց դատին հա-
մար գործելու զոր դուք, և թեր-
ևս կրնայ ներուիլ ինձ ըսել, և ես
այսչափ ի սրտի ունիմք: »

Ամսոյն 30ին մի ճաշկերոյթ
տրուած է դարձեալ ի պատիւ Մր.
և Տիկին Շուանի ընկերութեամբ Մր.
և Տիկին Կօզի, ուր ներկայ գտնուած
են իւր 40 ազգայինք: Պր. Է. Օ.
Մովսէս, Հայկական ընկերութեան
բարձրագոյն Նախագահն Բաթակի
առաջարկութեանց կարգ մը բա-
ցած է նախ առաջարկելով Ն. Վ.
Թաղուհոյն Անգլիոյ և Կայսրուհի-
ւոյն Հնդկաստանի և արքունի ըն-
տանեաց կենաց համար: Բաժակը
առաջարկուած են նաև Մր. և Տի-
կին Շուանի, Տէյլի Նիւուզի և ուրիշ
Հայասէր թերթերուն Բրիտանական
Բարլամէնթի Հայասէր անդամոց,
ինչպէս նաև ներկայ եղող Անգլի-
այի և Հայ Տիկնանց կենաց: Սոյն
հաւաքման մէջ Հայկական երգեր
երգած է Պր. Մեկիւր—Պէլլար, որք
յոյժ գոհութիւն պատճառած են
հանդիսականաց:

ՀԱՅ ԵՐ Ի ՏՓՂԻՍ.

« Տփղիսի մէջ, դրամական ոյժը
գրեթէ բացարձակապէս Հայոց ձեռ-
քն է: Այստեղի երեք դրամատներն
ալ, Առեւտրական Բան, Փոխա-
ղարձ վարկի Ընկերութիւն եւ Բա-
ղարային Կրէդիտային Ընկերութիւն՝
հիմնուած են Հայոց դրամա-
գրութեամբ, և նոցա վարչութիւնը
Հայոց ձեռքն: Տփղիսի մէջ
կան նաև երեք առանձնական բանկ
ային գրասենական օրոնց երեքն
ալ Հայոց են: Ձիւղայնեան, որ մի-
անգամայն Տփղիսի ամենամեծ կալ-
ուածատէրն է, Ծովեանեան եղ-
բարք եւ Ընկ. եւ Պրիտոնեան—Շախ-
նազարեան:

Տփղիսի վաճառականութիւնն
ևս մեծաւ մասամբ Հայոց ձեռքն է,
որուն արդիւնքն է անշուշտ, որ
դրամագրութեան անշարժ կալուածոց
մի նշանաւոր մասը նոցա կը վերա-
բերի: . . . Պաշտօնական տեղեկու-
թեան համամաս Տփղիսի մէջ 49
վաճառական կան առաջին և երկ-
րորդ կարգի օրոնց 30ը Հայ են,
իսկ մնացածներն Եւրոպացի, Ռուս,
վրացի, Հրեայ, և այլն: Չեմ հաշ-
ուեր մանր առեւտրականներն, ո-
րոնք երրորդ կարգի են: »

Կ. Տիւրեան, Հանգէս Ամսօր-
եայի Յունուարի թիւոյն մէջ:

« Եթէ ժողովուրդը ՀՅՄԸ

է, ԼՐԱԳԻՐՆԵՐՆ ԱԼ ԱՅՆ ՀՕՏԻՆ

ՊԱՀԱՊԱՆ ՇՈՒՆԵՐՆԵՆ՝ Կ'ԸՍԵՆ.

ՎԵՐՅՈՒՐ ՊԱՀԱՊԱՆ ՇՈՒՆԵՐՆ,

ԱՅԻ ՀՕՏԸ ԳՈՅԼԵՐՈՒՆ, ՅԱՓՇՏԱ-

ԿՈՒԹԱՆ ՄԱՏՆԵՑԻՐ. — Արարատ,

Հոկ. 21, 1876.

Կուգէ՞ք աշխարհի և ձեր հա-

մարին եղարաց ձայնն իմանալ,

և ձեր ձայնն ալ անոնց հասցնել,

ԱՌԷ՛Ք, ԿԱՐԴԱՅԷՔ

ԵՒ

ԲԱԶԱԼԵՐԵՑԷՔ

ՍԵՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏ

Կը հրատարակուի երկու շաբաթը անգամ մը, Հինգշաբթի օրեր:

Խմբագիր Եւ Տէր,
ՓԱՌՆԱԿ ՄԱՏԹԵՈՍ ԱՅՎԱՏԵԱՆ:

ՊԱՏՄԱՆԻ ԲԱԺԱՆՈՒԴԱԳՐՈՒԹԵԱՆ
(Բաժնի տուրքէ ազատ.)
Միացեալ Նահանգաց Համար,
Մէկ տարեկան 2 տուրք,
Կէս 1
Օտար երկիրներու համար,
Մէկ տարեկան 12 շէլին,
Կէս 6

Բաժանորդագիրք կանխիկ վճարելին. և կրնան յղուիլ փոխանակագրով, Բոսթոն կամ Էքսթրէմի Դէրմի հրամանով և կամ վաւերացեալ նամակով:

Թղթակիցներէ կը խնդրուի իւրեանց ստանձնած հրատարակչին անուան հետ բուն անուններն ալ խմբագրութեան գիտցնել: Եւ թէ հրատարակութեան, այլ վստահութեան համար:

Ձի հրատարակուած գրութիւնք ետ չեն դարձուիր որ և է պարագայի ներքէ:

Ուղղել ամեն գրութիւնք առ
THE ARARAI,
No. 100 Centre Street,
NEW YORK.

Նիւ ԵՕՐԳ, Փետր. 26, 1891.

ՆՈՒԻՐՈՍՏՈՒԹԻԻՆ.

Նիւ Եօրքէն ԱԶԳԱՍՏԻ ՈՄՆ
նուիրեն ԱՐԱՐԱՏի յառաջդիմութեան և զարգացման համար Գան Տօլար, որու համար հրատարակու կը յայտնեմք մեր խորին շնորհակալութիւնն:

Յիշատի չեմք կրնար մեր շնորհապարտութիւնը ըստ պատշաճին յայտնել սոյնպիսի բարեսէր ազգայնոց արարքին նկատմամբ, որք ձեռնարկին հետ կցեալ ծանր զոհողութիւնները, որոց մէջ գլխաւոր տեղ կը բռնէ դրամականն, ծանշեալով յանձնակալ կը քաջալերեն զմեզ. — Փ. Մ. Ա.

ԲԱՌԱՐԱՆ.

Խաղաղութիւնն ի Հայաստան.
— Բազմաթիւ գոյ. — Թարգմանի ըստ Թրքականին, — գինումն Գրգաց ի Հայաստանի գաւառս. — աքսորումն Հայոց յԱփրիկեան Տրիպոլիս. — բանտարկումն առանց մեղաց կամ գատատառնի. — բազմապատկումն հորտա հարութեանց ի Հայաստան. — բաշխումն շքանշանաց առ ուրացեալս որք ի Կոստանդնուպոլիս. — հրատարակումն Տպագրական Տեսչական ստութեանց. — արգելումն պատմական և կրօնական մատենից ի վարժարանս:

ԹԱՂՈՐԴԹՈՒՄ.

Մեր Եւրոպական թղթակիցներէն ոմանք փափաքած են գիտնալ Նիւ Եօրքի Հայաստանեայց Եկեղեցւոյ վրայօք: Ինչպէս Կոստանդնուպոլսոյ թերթերէն տեսնուած է, մեր հեռուոր հայրենակիցք Ուսթըրի և Նիւ Եօրքի Եկեղեցւոյն իրարու հետ շփո-

թեւում մէջ կը գտնուին. և որչափ որ ԱՐԱՐԱՏի սիւնակներու միջոցաւ լիովին տեղեկութիւններ աւած են Ուսթըրի այդ նորակառոյց հաստատութեան մասին, կարող չեն եղած յստակ գաղաքար մը ունենալ Նիւ Եօրքի Եկեղեցւոյն վրայօք ալ:

Ուստի թէ Ամերիկեան և թէ Եւրոպական մերազնեւոյց սոյն արդարացի հետաքրքրութիւնը գոհացնելու համար, և թէ յանուն Հայ ազգին կատարուած սոյն գործին մանրամասնութիւնները ժողովրդեան ներկայացուցած ըլլալու համար, Նիւ Եօրքի մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաստատման մասին եղած թղթակցութեանց և կատարուած գործողութեանց մանրամասնութիւնները յառաջիկայ թուով պիտի հրատարակեմք:

ՈՒՐ ԵՄՔ.

Եթէ տեսածնուս պիտի հաւատամք, ուր որ էինք դարձեալ հոն եմք: Մինչդեռ Հայն դարերէ ի վեր ուրիշ հպատակ Գրիտոնեայ ազգաց պէս իւր քաջած տառապանաց չի դիմանալով, Հայաստանի մէջ բարեօրէնութեան ներմծման վրայ կը պնդէր և իւր Գրիտոնեայ Եւրոպացի եղբարց ամենայն ըզգուշութեամբ շնորհած ճարգ Բօղոսածին տաճն և չորս տարին երէ յետոյ գործադրուած չըլլալուն համար աղաղակ կը բռնանար, այսօր պիտի լռէ՞ իւր գոհացեալ, որովհետեւ իրեն պահանջածը իրեն չի տրուելէ ի զատ, առաւել ևս իր իրաւունքներէն զրկուած է:

Տակաւին Ռուսիայէն այն վերջին սաստիկ ապտակն կերած չէիր. տակաւին Պալքանեան լեւանց մէջ գերիշխանութիւնը կորուսած չէիր. տակաւին Հէրսէք, Պոման Կարս և Պաթուս ձեռքէդ խլուած չէին, երբ երջանկայիշատակ Ներսէս Պատրիարքի օրով Հայերս այսմաւորքի մեծութեամբ « Տեղեկագիր Գաւառական Հարստահարութեանց » անուն տետրակ մը մատուցինք Բ. Իրանդ, որ կը պարունակէր այն ամէն ոճիւնները որ քու Միւսլիմեզայրներդ գործած էին Հայաստանի մէջ և անպատիժ մնացած. այնպիսի ոճիւններ և հարստահարութիւններ որ քու խորամանկ պաշտօնեայներդ անգամ չէին կրցած ուրանալ. և որոց կայ եղած ըլլալն դու ինքդ հաստատեցիր Պէրլինի Վեհաժողովին մէջ դոցա բարձման համար ըրած խոստումներովդ, Ո՛վ Կայսրութիւն Օսմանեան:

Այն օրէն մինչև ցայսօր այդ ոճիւններու թիւը տանապատիկ աւելցած ըլլալն լիովին ապացուցուած է, թէ քու դատարաններուդ չի կրցած պարտելած ճշմարտութիւններով և թէ դարերէ ի վեր իւր հաւա-

տարմութեամբը անուանի եղած Հայ ժողովրդեան յուսահատական միջոցներու գիմելովն, Ո՛վ, Վեհափառ Տէ՛ր ո՛չ, Հայերն գիտեն թէ իրենց պահանջը երբ հատուցուած կըլլայ. գիտեն թէ հարկւններով անմեղներ բանտարկել և անոնց մէկ տասներորդին Եւրոպութիւն շնորհելը Հայաստան բարեկարգել ըսել է. գիտեն թէ ձեր կողմանէ ինչ քայլեր առնուիլ պէտք են իւրօք Հայաստանի մէջ բարեօրէնման մեծելու համար: Այս բաները միայն Հայերը չեն որ գիտեն՝ այլ ձեր դարացի և դաշնակից Եւրոպական ազգերն ալ:

Իրաց այսօրուան վիճակը անցեալ տարւոնէ լաւագոյն չէ, և ոչ ալ անցեալ տարուանը առջի տարւոնէ. և այսպէս կրնամք հաշուել մինչև այն օրը երբ Հայերս Օսմանեան գահիդ հպատակիլ ստիպուեցանք: Ուստի, հոն եմք ուր որ էինք. բայց իրաց վիճակը տաճն և իննիւրդ դարուս այս վերջին օրերուս մէջ պէտք է որ փոխուի.....

ԳՈՐԾ ԵՒ ԳՈՐԾՈՂՔ.

Գանի որ օր ըստ օրէ աճելու վրայ եղող Ամերիկեան գաղթականութեանց բարօրութիւնը և նոցա անգործ մասին զբաղում հայթայթելու բարենպաստակ գործը մասնաւոր ուշադրութեան արժանացած է, Դիւնյա՛ն ԱՐԱՐԱՏի վերջին թուով ծանուցած էինք, անպատշաճ չէ որ կարելիութեանց վրայ մի խոստով ակնարկ մը աստ նետեմք, առանց սոյն բարի գործը իւր ուշադրութեան առարկայ ընող պատկառելի մարմնոյն գործոց միջամտել փորձելու:

Կարենալ որոշելու համար թէ Հայերը այս ընդարձակ երկրի մէջ ինչ ընելու են, պէտք է գիտնալ նախ և առաջ թէ դոքա ի՞նչ ընել կարող են կամ ընելու յատկութիւն ունին:

Ձգենք այն մասը որք արդէն երկրին լեզուն գիտեն և կոչում մը ունին, և իրենց կողմը կամ արհեստը կրնան շահագործել թէ գործելու տեղ մը ունենան: Այդպիսիներուն ըլլալիք ծառայութիւնը ամենէն գիւրդին է, և իրենց տեղացի արհեստաւորաց կամ գործաւորաց չափ պատեհութիւն մը կրնան ունենալ այս կամ այն տեղ վերադառնալու, փոքր ինչ բարոյական օժանդակութեամբ:

Բայց անդին մնաց մեծագոյն մաս մը որք քիչ տեսնել ի վեր հոս են և գործ չունին, և կամ ճիշդ հասան և գործի մը հետեւելու են որպէս զի կարենան ապրիլ. այս մասն է որ երկրին լեզուն ալ չը գիտեր, և թէպէտ ուսանիլ կուզէ կամ սկսած է, բայց գործի և փողի ալ անմիջական պէտք ունի: Խնդիրը այն է որ այսպիսիներուն ի՞նչ ընելու է:

Թեւադրութիւն մը եղած է որ կարողութեան տէր Հայերէ դրամագլուխ մը գոյացուի և այդ դրամագլուխ գործարան մը հաստատուի և դորս մէջ միայն Հայեր գործածուին, և այդպէս սովորհետ մը ուսանին և ինքզինքնին օգտակար կարենան ընել:

Այսպիսի ձեռնարկ մը ամէն նկատելի միջոցներուն ամենագոյնի հետ կրնան անկարելի ըլլալ կը թուի մեզ, որովհետեւ:

Նախ՝ սկսելուկամ կարենալ բանալու համար այնպիսի ձեռնարկերու գործարան մը ուր անգործ բազմաց մէջէն զգալի կարենալ ընելու չափ համաստ թիւ մը կարենայ գործածուիլ, չափաւոր դրամագլուխ մը անբաւական է, և եթէ մեծաքանակ դրամագլուխ մը իսկ կարենայ յաւաջ բերուիլ, շատ գոհողութեամբ ընալ արդիւնք մը միայն պիտի կարենայ ձեռք բերուիլ, որ հաւանտեսական է:

Երկրորդ՝ եթէ այդպիսի հաստատութիւն մը երբեք կարենայ գոյութիւն ունենալ, միայն կարգ մը գործաւորներ պիտի կարենան յառաջ բերուիլ: Մինչդեռ որչափ տարբեր ճիւղերու մէջ Հայեր կարենան հաստատուիլ այնչափ նոր ստպարէզներ բացուած կըլլայ Հայ ժողովրդեան: Իսկ եթէ այդ գործարանը բազմաճիւղ արհեստանոց մը ըլլայ, ըսել կըլլայ բանալ անհուն ծախքի գուռ մի տուանք և կամ խորհելու, և ոչ գաղթականութիւնը կրնայ այդպիսի ծախք մը տանիլ և ոչ ալ այդ կերպով եղած արտադրութիւն մը կրնայ շահ մը բերել հրատարակի միջման մը տեսելով:

Երրորդ՝ փորձառութեամբ հաստատուած է և ամէն օր կրնայ գիտնալ թէ Թուրքիոյ մէջ գործաւորութեան եղանակը և Միացեալ Նահանգաց մէջ գործելու եղանակը իրարմէ անհուն տարբերութիւն ունին, և քանի որ այդպիսի գործարան մը շարունակ խակ ձեռքերով գործելու վրայ պիտի ըլլայ, որ և է դրամագլուխ տոկոսն իսկ չի հատուցանել ի զատ, կարենալ գոյացուելիք որ և է գուժարներ յապտրութեան հալեցնելու դարան մը պիտի ըլլայ, ևն. ևն. այսինքն կան նաեւ ուրիշ պատճառներ, որոցմէ ոմանք նոյն խակ Հայոց ընկերական կենաց կրնանակութեան յառաջ կուգան, և որք նմանօրինակ ձեռնարկ մը, նամանաւանդ այս երկրի մէջ, կարենալ յաջողելու ամենափոքր նշոյլն անգամ չեն թողուր:

Սակայն, ըստ մեր համոզման, թէ ինչ քայլեր կրնան առնուիլ փափաքուած նպատակին հասնելու համար, պիտի սկսիմք մաս առ մաս ԱՐԱՐԱՏի միջոցաւ հրատարակել յաջորդ թուէն սկսելով

ԹՈՒՐԿԻԱ. ՕՐԷ ՕՐ

ՍՈՒԼԹԱՆԻ ԳԹԱՄՈՒԹԻԻՆ ԱՌ ՀԱՅ ԲԱՆՏԱԿԵԱԼՍ.

ՅԱՆ ՅԱՒՈՐ ԷԻՆ.

Մանաւոր առ Արարատ.

Ա.
Ի՞նչ մթութեան երկիրս է Թուրքիա: և մինչև որ աստիճան զաւելաներ, խարէական հնարքներ և վատթար վարչութիւնն ի գործ կը դրուին այդ կայսրութեան մէջ՝ որու օրէնքը, սահմանադրութիւնը և կրօնքը դէպ հանգէպ հակառակ են ճշմարտ քաղաքակրթութեան, քրիստոնէութեան, և համակիր մարդկութեան սկզբանց. ուր արդարութիւնը ամենաբարձր գին մը վճարողին կը վաճառուի. ուր պաշտօնական պղծութիւն և բռնապետութիւն ամէն բանէ վեր կը տիրէ. և վերջապէս ուր ո՛չ խօսելու ազատութիւն կայ, ո՛չ գործելու և ո՛չ ալ պաշտանան, Ափսո՛ս որ անկարելի է ամբողջովին նկարագրել Գրիտոնէին և ի մասնաւորի Հոյուն կրած տառապանքները այդ իննիւրդուստ սասանալ և արտաքուստ անշուն Թուրքիա կուշուած երկրին մէջ, Ասի թերս. քիչ մը չափաւորեցեալ երկնայ, բայց իրականապէս այս է Թուրքիոյ մէջ իրաց վիճակը: Մուսայ պէյն դատաւան (°) էն իզատ, Կրետական պատիւր ներումն, Կարնոյ և Գուժ Գափուի Հայոց ջարդը և Կոստանդնուպոլսոյ մէջ սնհիմն ձերբակալութեանց տեսլը բացարձակ ապացոյցներ են որք տակաւին մոռցուած չեն:

Թուրքիոյ Ուսթըրի վերջերս լի կասկածանօք են մութ բանտերու մէջ նետուած անհամար Հայերէն ութսունին ներողութիւն շնորհեց: Արդարութեան այս նշոյլը Թրքաւորաց և իրենց Թրքական մամլոյն կողմանէ, իւր « Կայսերական շնորհ » կը յայտարարուի: Բայց այս Հայազգեաց դէժ՝ բերուած որոշ ամբաստանութիւններն ինչ էին. ոմանք ամբաստանուած էին մէջն Հայաստան բառն պարունակող գիրք, լրագիր կամ երգարան քովերին գտնուած ըլլալուն համար. ուրիշները՝ կարծեցեալ ապստամբական ընկերութեանց մէջ մաս ունենալուն համար. ուրիշ մեծ մաս մը թրքական կառավարութեան կամ անձնակաւանապէս այս կամ այն « ճօճ » պաշտօնէին հաճելի եղած չըլլալուն համար. և շատեր ալ պատիւ և յառաջացում՝ փնտռող Թուրք ոստիկաններ հաճելի գործ մը կատարել ուզելուն համար:

Այս անմեղ զոհերը բանտարկուեցան և ստիկանութեան կողմանէ քննուեցան, և այս քննութեանց ժամանակ խիստ շատ անգամներ ահաւելի տանջանաց ենթարկուեցան, ինքզինքնին մեղապարտ ընող խոստովանութիւն-

ներ ընկերացաւ համար. Այս ամբարանները գէտ վկայութիւնք ամբողջովին ուստիականութեան կողմանէ պատրաստուեցան. իւրեանց յանցանքը իրենց չի գիտցուցուցաւ. իրենց փաստարաններ չի կրցան ունենալ, և վերջապէս բաց դատարանի մէջ չի դատուեցան. այլ ընդհանրապէս բանտերու խորերը պահուած մնացին:

Սոցա կը յաջորդէ ներողութիւն մը իր «Կայսերական շքանորհ», որ միայն Կոստանդնուպոլսոյ և փոքր Ասիոյ մէջ բանտարկելոց մի քանիներէն անդին չ'անցնիր:

Ուր մնացին այն քանիքները, որ և դատարարները որք ճիշդօրոյն և սորա նման այլ տեղերու մէջ փնտնուելու վրայից դուրսն. Արեւոք Հայաստանի մէջ օր ըստ օրէ կատարուած հարստահարութեանց լուրերը արժանահատադիրներէ մեզ հասնելէ դադարեցան:

Ամէն լուսաւորեալ միտք գործունէալ պիտի մնայ Սուլթանին այս նոր «Կայսերական գթածութեան» վրայ. Ասի միայն եւրոպական և Ամերիկեան ժողովուրդեան աչքը ներկելու գործ մ'է, որք բարեբախդար բաւական բաց են թրքական խաբէութիւններն տեսնելու. թրքական Կայսրութեան վարչական եղանակին վրայք տեսնելու թիւն ունեցող շատ քիչ անձինք կ'ընան ուրանալ որ թուրքիոյ Հայոց վիճակը քաղաքակրթեալ աշխարհի մէջ իւր նմանը չունի. այսպիսի բռնապետական կռաւարկութիւն մը որչափ շուտով եւրոպայէն արտաքսուի այնչափ աղէկ պիտի ըլլայ ամենուն համար:

ՀԱՅԿ:

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԲԱՐԻՍԻՄԵՆԴ

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԽՈՐՀՐԳՐԱՍՆ

Հոնտոն, Փետր. 9. 1891.

Յրանսից Սիմիլիսըն հարցուց թէ՛ ինչո՞ւ համար էր որ Ասիական թուրքիոյ նկատմամբ հրատարակուած թղթակցութեանց մէջ Արտաքին գործոց Պաշտօնատան անդամները ներմուծելու մասին առ Սըր Ուիլիամ Հոլաթը որ և է գրութիւնը չեն երեցած:

Սըր ձէյմս Ֆրիլիգն.— Կապոյտ Տեսարանին պարունակած ժամանակամիջոցին— Յունական միջն Նոյեմբեր, 1890—մէջ Արտաքին գործոց պաշտօնատանէն առ Սըր Ուիլիամ Հոլաթը, տեղեկագրեր ուղղուած կամ իր արարքն ընդունող գրութիւններէ ի զատ ուրիշ թղթակցութիւնք չկան. Յունական թուականաւ Ն. Վ. Թագուհւոյն դեսպանը հրահանգ ընդունած էր տպաւորել Սուլթանին Կառավարութեան վրայ որ վտանգաւոր է Ասիական թուրքիոյ մէջ այն իրաց վիճակին շարունակութեան թոյլ տրուելը որք ծանուցուած էին Ն. Վ. Թագուհւոյն կառավարութեան կողմանէ:

ԻՆՉՈՒՒ ԱՂՕԹԵԼՈՒՒՆ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Էնտէրանտան Պէլք է հետեւեալ կը քաղեմք:

Վրէննա, 21 Յունիւ. 1891
Կոստանդնուպոլսէ առնուած տեղեկութեանց համեմատ երէկ ծանուցուած էր որ Սուլթանը վերջին խոստովութեանց պատճառաւ դատարարները ընդհանուր ներողութիւն չտրուած է. այժմ կ'իմացուի որ այդ ներողութիւնը միայն կարգ մը բանտարկելոց կը վերաբերի որք տական ին դատուած չեն և որոց գէտ օրոշ ամբաստանութիւն մը չկայ. մինչդեռ միայն Կոստանդնուպոլսոյ մէջ բանտարկելոց թիւը 18000 կը հասնի. Կայսերական այս որոշումը այս առաւօտ Մայր եկեղեցւոյ մէջ մի պատահման տեղի տուաւ. երբ Պատրիարքը Սուլթանին կենաց համար կաղօթէր, ծայրմը գոչեց. «Ինչո՞ւ կաղօթէք Սուլթանին համար»:
Պատրիարքը անմի ապէս իւր աղօթքն վերջացուց:

ՀՐԱՊԱՐԻՄԻ Ի ՍԱՏԱՆԱՅԻ

Հոնտոնի Արմէնիա Փետր. 15 թուոյն մէջ ընտիր խմբագրանով մը, Կոստանդնուպոլսոյ վերջի անցից խաբէականութիւնն և խայտառակութիւնը բացատրելէ ետք, հետեւեալ տողերը կը յաւելու:

«Բանի որ այս (Հայկական) խնդիրը շարունակուի, այնչափ առաւել նորա հետեւեալը զգալի պիտի ըլլայ. Թրքական Ռոտիկանութեան Պաշտօնատան պարագայ տեղը «Հրաժարմի մի Ստատանայ» աղօթքը արձակեալ բանտարկելոց կրկնել տուած պիտի ըլլայ վատահամբաւ Սուլթան քահանային միջոցաւ, որով վրայ Հայեցան այդ անմեղ անձինք իւր այն աղօթքին մէջ յիշուած Ստատանային միայնակ մարմնաորութիւնը, որ նա եղած էր իրենց նկատմամբ. այդ երգումը չընող ուրիշ Հայրենասէրներ յառաջ պիտի գան որք իրենց աչքը Արեւելք և Արեւմուտք դարձնելով դարման մը պիտի փնտենան այն չարեաց համար, որք յայտնի եղած են վերջի Կապոյտ Տեսարանին ընթերցող ամէն իմաստուն մտքերու. Միայն մեծ մարգարէ մը չէ որ կրնայ նախատեսել թէ նոր յեղափոխական յանձնարարք պիտի կազմուին, որք իրենց նախորդներու փորձառութեանց օգտուած առաւել ևս ահարկու պիտի ըլլան, և թէ լաւագոյն կազմակերպեալ ապստամբութիւն մը պիտի ծագի, աւելի ընդարձակ հիման վրայ գործելու:»

ԿՐԻՏԵԻ ՎԻՃԱԿԸ

Աթէնք, Փետր. 8. 1891.

Կրէտէի մէջ իրաց ներկայ վիճակը խիստ անգոհացուցիչ է. ինչ մը յանգուգն Կրէտացիներ լեռանց մէջ տեղէն տեղ քաշելով վրայ են, և վերջերս Բէթիմօսի մէջ խումբ մը պահակ զօրաց վրայ յարձակեցան և խել մը Մարթինի հրացաններ և մեծ մաս մը ռազմավերք տարին:

Յոյն կառավարութիւնը իւր ամէն ջանքն ի գործ դնելու վրայ է դէպի կղզին որ և է գործնական օգնութիւն զրկուիլն արգելելու համար. վերջերս Կրետական Պաշտպանութեան Յանձնարարի կողմանէ գնուած 85,000 բամբուլ շտեմբ գրաւեց. որով կառավարութիւնն ոչ նուազ անփողով դաւանութեան վրէտանգին ենթարկուեցաւ իւր միջադէպին պարտականութիւնն կատարած ըլլալու համար. Բայց սակայն հակառակ նախագուշտութեանց կրտուի թէ տասն և հինգ զինեալ Կրէտացիներ բաց նաւակի մը մէջ ծովն անցած և իրենց զինուորեալ եղբարց հետ միացած են:

ԹԵՆՈՒՐԵՆԵՐԸ ԻՆՉ ԿԸ ԽՈՐՀԻՆ ՄԵՐ ՎՐԱՅ:

Խմբագիր Տէր:

«ԱՐԱՐԱՏ» յայ երկրորդ վերածնութիւնը ինձ յիշեցուց, ձեր վրէտացեալ հօր Մատթէոս Մ. Այվատեանի անմահանալի քաղցր յիշատակը, որ մինչև ցայսօր կը յարգեմ իմ սրտիս մէջ:

Հին աշխարհի մէջ մահուան անակնկալ ձրաններէն յափշտակող «ԱՐԱՐԱՏ»-ը, որ 15 երկար տարիներէ յետոյ նոր աշխարհի մէջ յարութիւն առաւ, թո՛ղ նրա մէջ մի տողերը, աղի որոտառուաց մէկ մէկ պղտոր աղբերակներ լինին այն սրտերուն համար որոնք Հայութեան սուրբ սիրոյ զգացումներ կը կրեն. նորա սինակները թո՛ղ նորուին Հայոց աղբիւ և պատմական աշխարհի թշուառ որդւոց բարոյապէս աջակցելու. թո՛ղ «ԱՐԱՐԱՏ»-ը քարոզէ միշտ յիշելի միտք այն ազգի, որոնք իւրեանց թշուառութեան պատճառ են եղած. թո՛ղ ԱՐԱՐԱՏ-ը ներշնչէ նրանց հոգւոյն անվերջութիւն և քաջութիւն թո՛ղ ԱՐԱՐԱՏ-ը ուսուցանէ նրանց պահպանել իրենց գոյութիւնը Մայր—Հայրենիքի մէջ. թո՛ղ ԱՐԱՐԱՏ-ը ճակատաբաց աղաղակէ թէ պէտք է խորտակել բարբարոսի ամբարտաւան եղջիրները. և ահա այն տեսն պիտի կարենամք տեսնել մի օր Հայկական եւագոյն խոհրդաւոր դրօշակը իսկական ԱՐԱՐԱՏայ անմահելի բարձր գագաթի վերայ. երկինք յաջողէ ձեր բարի նպատակը, որպէս զի կարենամք անվրէժաւ կերպիւ յառաջ տանիլ թշուառ Հայուն յարգար դատը:

Օն՝ յառաջ, կեցցէ «ԱՐԱՐԱՏ»:
ՄԿՐՏԻՍ Ս. ԹԻԻԹԻՆՆԻՅԻՑԻ
15 Արց. 4582
20 Յունիս 1891
Րուստուգ. (Պուլղարիա):

Հետեւեալն Մանգեսթը Էքզամինըր Էնտ թայմից կը քաղեմք. «Եւրոպական և Ամերիկեան Հայ ազատ մամուլն վրայ եղած վերջին յաւելուածն է Նիւ Եօքի ԱՐԱՐԱՏը. Այս թերթին զխառնոր նպատակն է Հայութեան շահերն պաշտպանել «աներկիւղ և անաշտ» որով պատճառաւ սիրեցեալ Հայկական թերթը (որ 1869-ին հաստատուած էր.) 1876ին Կոստանդնուպոլսոյ մէջ թուրք Կառավարութեան կողմանէ դադարուած էր, նորա ազգասէր խմբագիր Տիար Մ. Այվատեան վէճեր Մէհմէտ Րիւշտի Բաշայի հրամանաւ ի մահ ծեծուելով. Տասն և հինգ տարիներէ յետոյ ԱՐԱՐԱՏ վերականգնուեցաւ, ղեկավար խմբագրին որդի, Պր. Փ. Մ. Այվատեանի կարող խմբագրութեան ներքեւ, որ յիշուի ամէն աշխկութեան արժանի է, իւր այս գովելի գործին համար:

Մարտիկոյ Արմէնիա իւր Յունվար 31 թուոյն մէջ Արարատի Նիւ Եօք վերստին հրատարակուելուն լուրը իւր ընթերցողաց տալէ յետոյ կը յաւելու հետեւեալ տողերը:

«Պր. Փառնակ Այվատեան որդին է հանգուցեալ անուանի խմբագիր Մատթէոս Այվատեանի որ 1876-ին իւր «Արարատ» լրագրի մէջ համարձակած լինելու հրատարակել թուրքերի գործած մի սոսկալի հարստահարութիւնն Տրապիզոնի Շահաւ Հայաթիակ գիւղին մէջ, կան չուեցաւ Բ. Դուրը ուր Մեծ Եպարքոս Մէհմէտ Րիւշտի փաշայի հրամանով ծեծուելով արին որձկալու չափ, նահատակուեցաւ:»

Յիշելալ ազգանուէր թերթը Հայ-Ամերիկեան գործոց վրայ կարեւոր լուրերու շարք մը ևս հիւրասիրած է իւր սինակաց մէջ Արարատի Յունիւ. 15 թուոյն քաղուած:

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

ՄԵՆ ՀՐԵՇԻ ՄԸ ԿՄԱԽԲԸ:

Ի Գանատա Ս. Թոմաս քաղքէն 40 մղոնի չափ գէտ յարեմուտք. Հայկէյթի մէջ հրէշի մը կ'ախքը գտնուեցաւ որ այժմ նոյն գիւղի մէջ ցոյցի դրուած է. Գրեքմանին տարածութիւնը, ուր այդ ճիւղին ոսկերքը գտնուեցան, քանակ մէկ առեւտուին և հինգ ոտնաչափ է. Սուկերքը գրեքմանին երեսը տարածուած էին, իրարու կցուած ծայրերը մակերևոյթէն վեց ոտնաչափ խորութեամբ կաւի մէջ թաղուած ըլլալով. Կաւին վրայ բաւական խորութեամբ աւազային սեւ հողով ծածկուած էր. Կենդանոյն երկայնութիւնը, արգէն գտնուած ոսկրներուն մեծութենէն դատելով և տակաւին չի գտնուածներն ալ հաշուելու ըլլալով, քիչի ծայրէն մինչև արջին արմատը իւր քանակ երկու ոտնաչափ է. Այս 1845 թ. ամառուան մէջ Նիւ Եօք Նահանգի Նիւպորթ քաղքին մէջ գտնուած հաշակաւոր Մեծ Հրէշն ալ մեծագոյն է, և կրեմալքը, իւր ամբողջութեամբ, աւելի ընդարձակ և աւելի կատարեալ է քան Բէյքըքի, Օնայո, Միսսուրի, Գալիֆորնիա և Օրէգոնի մէջ գտնուածներէն:

ՆՈՐ ԶԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՄՄԱԼ Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՒԵՆ:

Մի նոր ճամբորդութիւն մը ևս պիտի ըլլայ ի Հիւսիսային րեւոյտաշիկայ Մայիս ամսոյ մէջ. Եւ ի՞նչ ամէն բան յուսացուածին պէս յաջողի Բարիկու Օդային Նաւարկութեան Գերագոյն Վարժարանէն Պրնց. Պէտտիօն և Կիւսդալ Էրմէթ երկրագնտիս այդ ի վաղուց ընտուած գագաթը պիտի գտնուելան: «Նամանաւառ» այս խուզողնացութիւնն, մինչև հիմայ փորձառններէն աւելի պակաս թուով անձերէ պիտի բաղկանայ ըստ անցեալներու Բարիկու Պր. Բիէն Էնվի, Ձիւքակոյի Լէւան Օթէլի մէջ. «Այս երկու անձինք խոմիին պաշտօնեայնները պիտի ըլլան ճամբորդութիւնը պիտի կատարուի, կամ լաւ ևս պիտի սկսուի, Օդապարկի մը մէջ, Ձէ ինչ սովորական օդապարկի մը, այլ առաւել ևս պիտոյքներով և կազմով կատարելագործեալ, որպէս զի օդային ճնշման յանկարծական փոփոխութեանց առաջն կարենայ առնուիլ. Սոքա Մայիս ամսոյ մէջ Սրիեյնպէրիէն պիտի մեկնին և Յուլիսի մէջ ճիւղ ուղղութեամբ և մի քանի օր տեւողութեամբ քամի է մը օգտնելուն պէս վեր պիտի ելնեն և գէտ ի րեւոյթիւն, ուր կը յուսան չորս օրուան մէջ հասնել. Ուսումնագէտը այս հնարքին վրայ նպատաւոր աջօք կը նային, և կըսեն թէ մինչև հիմայ խորհուածներուն ամէնէն գործնականն է:»

Ի ԼՈՒՏՈՆ

Անգլիոյ մէջ օրուան մեծագոյն խնդիրներէն մին է... կրնա՞ք երեւակայել. Արիստոտէլի մէկ կորուսեալ ձեռագրին գիտն, որ հին հեղինակաց մէջ բազմիցս յիշուած էր, բայց գտնուելու յոյսն ի վաղուց կորուսած էր գիտական և գրական աշխարհը. Բրիտանական Թանգարանի վարչութիւնն Եգիպտոսի մէջ կարգ մը պրոտաքեր (պարտաքեր) գտնած լինելով, քննութեամբ երեւան եղած է թէ անոնց մէջ կը գտնուին նաեւ Ամէնքի Սամանաղաբական Պատմութեան վրայ Արիստոտէլի մեծայարգ մէկ գործն, որ մեծ լոյս կուտայ Աթէնքի կառավարութեան եղանակին վրայ. Լոնտոնի լրագիրք կը հաշակեն թէ Թ. Դարին ի վեր, յորում Տակրոտի Տարեգրութեանց ձեռագիրքը գտնուեցաւ գերմանա ան վանքի մը մէջ, այսչափ կարեւոր գիւտ մը չէր եղած հնութեան երեւելի հեղինակաց գրուածներէն:

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Արարական Առաձներէ:

Այն որ չի գիտեր, և չի գիտեր թէ չի գիտեր, խեղդ է. հեռացի՛ր անկէ. Այն որ չի գիտեր և գիտէ թէ չի գիտեր, պարզ է. ուսուր անոր. Այն որ գիտէ, և չի գիտեր թէ գիտէ, քուռ է. արթնցո՛ւր զանի. Այն որ գիտէ, և գիտէ թէ գիտէ, խելացի է. հետեւէ՛ անոր:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ:

—Ձի սերմանըն կը նշանակէ չի քաղել:

—Գէշ հաւկիթ մը աղելի մը չափ տեղ կը բռնէ:

—Ուղղի՛ իւրաքանչիւր անհատ, և ազգն պիտի ուղղուի:

—Լուսագոյն է բարութիւնը. Եւ փորձելու մէջ անյողոյ կ'ընեն, քան թէ ընաւ չի փորձել:

—Սրտին բրած գործը այնպիսի գործ մը է որ դրամով չի կրնար վճարուիլ:

—Այն անձն կը սիրէ ուրիշները որ ինքզինքը ուրիշներու սիրելի ընել կը ջանայ:

—Այն որ միշտ գիւրդն գործ մը կը փնտռէ շատ դժուարութիւն պիտի ունենայ զայն գտնելու:

—Իւր մշտնջենական բան մը, պարզ կանթեղի մը լոյսը, օդային հրառուքէ մը լաւագոյն է:

—Եթէ բարիք ընելու շատ պատահութիւններ ունենալ կուզես, փոյթ ունեցիր առաջինն ձեռքէ չի փախցնելու:

—Ուղիղ գործելու հաստատ որոշում մը, մինչև իսկ անփորձութիւնը կը զեկալարէ փտանգաւոր անցքերու մէջն:

ԶՈՒՍԱՐՃԱԼԻՔ

Յաճախորդ. — Վաճառանցին որ կողմը բանիւր կը փակէ:

Նպարավաճառ.— ձիւդ քիթից հետեւ և անպատճառ կը գտնես:

Օրիորդ.— Սատիկի ցուրտ է այն սենեակին մէջ. այնչափ ցուրտ է որ ակոսներս իրար կը զարնուին. Պարոն.— Յանցանքը քուկէ է եթէ ակոսներդ իրար կը զարնուին. ինչո՞ւ զանոնք լաւ զետեղել չի տուիր:

Ա.— Ձեռն կարծեր որ օր. Բ. շատ տեղէն է:

Գ.— Անտարակոյս ո՛չ, նա մէկ քառորդ միլիօն ստացուածք ունի իւր անուանը:

Օննիկ.— Հայր, ինչու համար «մայրենի լեզու» կըսենք և հայրենի լեզու չենք ըսեր. Հայրը.— (Հառաչելով).— Որովհետեւ մայրը միշտ աւելի կը գործածէ իւր լեզուն քան թէ հայրը:

Վերին աստիճանի մի ժլատ մարդ սիրահարուած էր օպերետային երգչուհու վրայ. Երգչուհին էլ իր կողմից սէր էր ցոյց տալիս:

—Մի վարիւր, ասում էր ժլատին նրա բարեկամը, ամեն բան պարզ կարողես տեսել. Աղբորութեան կողմից ես երաշխաւոր եմ:

—Ես ինքս չեմ կասկածում, որ աղբորութիւնն կը գտնեմ, պատասխանեց ժլատը, ես նրան ամեն բան կասեմ և կառավարվեմ, միայն... ծննդեան և նոր տարվայ առներից յետոյ...—Մշակ:

Արեւելք:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ	
ՎԱՆ	
ՇԻՆՈՒԹԵԱՆ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ	
ՈՒՍԹԸՐԻ	
ՏԵՍ ԱՐԱՐԱՏ ԹԻՎ 4.	
ՑՈՒՑԱԿ Ա.	
Ս. Մ. Մինասեան	100.—
Յ. Թադևոսեան	100.—
Ա. Սահակեան	100.—
Պ. Յակոբեան	25.—
Տօք. Այվազեան	25.—
Տօք. Տատրեան	25.—
Պ. Սարեան	50.—
Պ. Իսախանեան	14.—
Յ. Գառնապեան	10.—
Ս. Սիմոնեան	1.—
Ե. Յակոբեան	1.—
Ս. Օհաննէսեան	10.—
Գ. Բարսեղեան	25.—
Տ. Վարժապետեան	10.—
Յ. Մկրտիչեան	5.—
Յ. Գրիգորեան	5.—
Ե. Էքսէրճեան	5.—
Ե. Խիւտալեւորի	5.—
Ե. Մաթիկեան	25.—
Գ. Յ. Սինանեան	5.—
Տիկին Գէորգեան	5.—
Տիկին Այվաթեան	5.—
Գրամադիչ Եագուպեան	5.—
Յ. Սահակեան	5.—
Ջանգալեան եղբայրք	5.—
Մկրտիչ Շիշմանեան	5.—
Յարութիւն Իսկեան	10.—
Աղէքսանդր Չէնոբ	5.—
Յ. Յակոբեան	2.—
Գրիգոր Չէօֆէկեան	2.—
Հ. Հէքիմեան	2.—
Տ. Պէշկէօֆ Լուրեան	1.—
Կ. Եօքսուրեան	1.—
Ս. Մաղաքեան	1.—
Ս. Փէշոսեան	1.—
Ս. Աթիթարեան	6.—
Յ. Յարապեանեան	2.—
Ղ. Յակոբեան	1.—
Յ. Մեարմարեան	1.—
Գ. Յովհաննէսեան	1.—
Ա. Թիւֆէնկեան	1.—
Թ. Գառնապեան	1.—
Յ. Տէր. Ստեփանեան	5.—
Յ. Թաշեան	0.50
Ս. Ռափայէլեան	0.50
Ս. Սարգիսեան	1.—
Ա. Անտոնեան	1.—
Ն. Նարեան	1.—
Կ. Ստեփանեան	2.—
Ս. Ղուրապեան	2.—
Գ. Ղուկասեան	1.50
Յ. Գառնապեան	0.50
Յ. Ազատեան	1.—
Խ. Քիւրճեան	0.50
Ս. Պողոսեան	1.—
Ս. Սիմոնեան	1.—
Պէշկէօֆ Թաշեան	2.—
Մկրտիչ Կարճեան	2.—
Պետրոս Քիւրճեան	2.—
Կարապետ Օհանեան	1.—
Ն. Մկրտիչեան	1.—
Գէորգ Նախիբեան	1.—
Գէորգ Համալեան	1.—
Կարապետ Յակոբեան	1.—
Գառնապեան	1.—
Արամ Օհանեան	1.—
Յակոբ Մկրտիչեան	5.—
Սարգիս Պողոսեան	10.—
Յարութիւն Կարապետեան	1.—
Գէորգ Օհաննէսեան	2.—
Միսաք Գէորգեան	5.—
Փոխադրելի	657.50

Փոխադրեալ	657.50
Թուխման Ոսկերիչեան	5.—
Յովհաննէս Չուլճեան	5.—
Յարութիւն Մենձօրեան	2.—
Մեղրեան Պրչաքճեան	1.—
Յ. Սարգիս Պողոսեան	1.—
Մանուկ Ստեփանեան	1.—
Թադէոս Գառնապեան	2.—
Սահակ Մատուրեան	0.25
Յակոբ Քէմալեան	1.—
Պողոս Խաչատուրեան	0.50
Մ. Տ. Սարգիսեան	1.—
Գրիգոր Ղուկասեան	1.—
Գրիգոր Տէր Մօսիկեան	0.50
Կ. Գէրգիս Մկրտիչեան	1.—
Աստատուր Պողոսեան	2.—
Մ. Գալուստ Մէր. Պետրոսեան	1.—
Յակոբ Գրիգորեան	2.—
Այվազ Գրիգորեան	1.—
Տօնապետ Նօրոսեան	1.—
Սարգիս Ռեւոտիկեան	1.—
Պետրոս Պօլաճեան	1.—
Անդրէաս Դիւրճեան	0.50
Հայրապետ Ստեփանեան	1.—
Մ. Ստեփան Քիւրճեան	2.—
Յակոբ Նաճարեան	1.—
Յարութիւն Ստեփանեան	1.—
	652.25

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանիոյ Ֆրէյտէրիք Կայսրուհին այժմ ծագեալ այցելելու վրայ է ի Բարիք և այնչափ գոհ եղած է իւր այս այցելութենէն որ իւր մեկնիլն մի քանի օր ևս յետաձգած է։ Անցեալ Կիւրակէ օր Պառօն տը Թիւրքի ի ճան ճաշեց ուր ներկայ էին նաև Միսցեալ Նահանգաց Պաշտօնայ Պատուարժան Հուսթիս Ռիտ և Տիկին Ռիտ և Բրիտանական Գեսպան Լորտ Լիդզըն և Տիկին Լիդզըն։

Երէկի թուականաւ հեռագիր մը կը ծանուցանէր Պաղլիոյ Պաշտօնէից խորհուրդը բաւական խորհրդակցութենէ վերջը որոշած է թէ Նախագահ Գարնօ չայցելէ Ֆրէյտէրիք Կայսրուհեայն, այլ Նախագահի տան գինեորական գլուխ Ժէն Պուրժէն միայն այցելութիւն մը տայ։ Եւ այդպէս կատարուած է այդ գիւտանգիտական քաղաքավարութեան փափուկ պարտականութիւնը։ Գաղղիոյ Հայրենասիրաց Միութիւնը խիստ յուզուած է Կայսրուհին վերադառնալու Պաղլիոյ այցելած ըլլալուն համար, և որոշած է ամէն օր ժողովք գումարելով բոլոր բառնալ այս բանին դէմ մինչև որ կայսերական այցելուն այդ քաղաքէն մէկնի։

—Մեծ դաւաճանութիւն մը գտնուած է Հարաւային Ամերիկայի Արճէնդիին Հասարակապետութեան Պուէնօս Այրէս քաղաքի մէջ։ Բայց մանրամասնութիւնքը ոստիկանութեան և կառավարութեան պաշտօնէից կողմանէ գաղտնի պահուած են։ Սաշափը միայն գիտցուած է որ այս դաւաճանութեան մի գլխաւոր նպատակն է եղեր կառավարութեան գլխաւոր պաշտօնեայներն սպաննել։ Անտարակոյս այս բանն մեծ յուզում պատճառած է երկրին մէջ։ Պաշարման վիճակ հրատարակէ ի Պուէնօս Այրէս։

—Կ. Պուէն կը գրեն Յունի, 25-26 Փետր, թուով, որ Տօք, Թիւրեքեան էֆէնդի հրաժարական զրկած է առ Պատրիարքն թէ՛ Ազգային երեսփոխանութենէ և թէ՛ Ուսումնական խորհրդոյ ատենապետութենէ ու անդամակցութենէ։ Արմէնեան—Մարտէլ։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մովսէս Տ. Տ. Բօրչըր ամսոյս 15 ին մեռաւ ի Ուաշինկթըն իւր բնակարանին մէջ, սրտի հիւանդութենէ։ Նորա յուղարկաւորութեան տիւրը հանդէսը կատարուեցաւ հետեւեալ Երեքշաբթի օր և թաղուեցաւ Արլինկթըն գերեզմանատան մէջ գինեորական ամենաբարձր պատուով։ Մովսէս Բօրչըր ծովային ռազմագիտութեան ամենաբարձր տաղանդ մը ունէր որ ծառանգած էր իւր հօրմէն և մեծ հօրմէն որք ևս կարեւոր ծառայութիւն մատուցած էին Նահանգաց իրենց ունեցած ծովային հետութեամբ։ Մովսէս Բօրչըր մեծ դեր կատարած էր Հիւսիսի և Հարաւի միջև 1858-1865 ի պատերազմին մէջ, երբ Միացեալ Նահանգաց Նաւատորմին հրամանարութիւնն ունէր Միսիսիբի գետին վրայ։

—Ամսոյս 14 ին քաղաքի մէջ մեռաւ ձէնէրալ Ու. Թ. Շէրման, որու ծանր հիւանդութիւնը ԱՐԱՐԱՏի Նախորդ թուով ծանուցած էր։ Մեծանուն Զօրավարին յուղարկաւորութեան տիւրը հանդէսը կատարուեցաւ ամսոյս 19 ի Հինգշաբթի օր իւր գինեորական աստիճանին արժանի փառօք, հանդէս մը որու նմանը խիստ քիչ անգամ կը տեսնուի։ Հանգուցելոյն մարմինը փոխադրեցաւ ի Ս. Լուի ուր թաղուեցաւ իւր ընտանեաց մօտ, և ասանկով վերջացաւ իւր Նախնայորդ կեանքը։ Զենեալ Շէրման կարեւոր ծառայութիւն մատուցած էր իւր ազգին, Պուլթընի ճակատամարտին և Նոր Օրլէանի և Վիքսպուրի պաշարմանք ժամանակ բարեկիւրատակ ձէնեալ կրանդի ընդհանուր հրամանատարութեան ներքեւ։

—Իւր երեք շաբաթի չափ առաջ ձէնեմիլ Բէնսիլվանիոյ մի ածխահանքի մէջ թաղուող հանքագործներէն հինգը կը զոհուէին մօտեցուիլ ամսոյս 23 ին և ողջ գտնուած են։ Տասն և ութն օրէ իվր թիւրեան մէջ թաղուած մնացած էին, և իրենց ինչպէս կարենալ գիտնալը գրեթէ հրաշք մը է։ Բէնսիլվանիոյ ածխահանքերու մէջ այսպիսի խուսափում մը լուռած չէր։

—Երկաթուղւոյ ստակի պատահար մը տեղի ունեցաւ անցեալ ուրբաթ առաւօտ քաղաքի կրանտ Սէնթրալ Տէքսի մօտ ներքնուղիին մէջ։ Նիւն ձէնվընի տեղաշարժ մը Պոսթըն և Ալպանի էքսպրէս կառավարին բախելով նորա վերջին կառքը խողովակեց։

Բեկոյքը բռնկեցաւ կառքին մէջ գտնուած վառարանին պատճառաւ և վեց անձնք այրեցան, այնչափ գէշ կերպով որ իրենց մարմինները չի կրցան ստուգուիլ։ Այս արկածին պատճառը մեքենագործին և ուղեպանին միջև վեճի նիւթ եղած է որոց առաջինն կըսէ թէ ճամբան բաց և նշան տրուած էր իսկ վերջինն՝ թէ վտանգի նշան տրուած էր։ Անտարակոյս յանցանորն պիտի պատժուի։

—Արժ. Յովսէփ Մ. Վ. Սարաեան ամսոյս 13 ին քաղաքէն մեկնելով և այցելելով Ֆիլադելֆիա, Թըրօյ և Բրօքլինգ, վերադարձած է յուսեղը։

—Մարտ 7 ին Իսթըրն Սէպարէօլի մէջ ի յիշատակ Սրբոց Վարդանանց տրուելիք հանդէսը շքեղ երկոյթ մը ըլլալը խոստանալով Կարգադիր Յանձնախումբը մեծ եռանդով աշխատելու վրայ է տրուելիք ներկայացումը յաջողցնելու համար։ Առաջին անգամն է որ Նիւն Եօքսի մէջ այս տեսակ ազգային թատերական փորձ մը կը փորձուի։

—Անցեալ շաբթու մէջ Կոստանդնուպօլսէն և այլ թրքական գաւառներէ ի քաղաքս հասած են վեց ազգայնք որք աստ հաստատուիլ կը մտնին։

—Բերկրութեամբ իմացանք որ Տիար և Տիկին Պուղտանեան միմանջ գաւկի բարեբաղդութիւնն ունեցած են։

—Ֆիլատէլֆիոյ Բիլսմէյքըրի մէջ Տիար Յ. Օզանեան յիշած է, ԱՐԱՐԱՏի երկրորդ թուոյն մէջ Մր. Սթայնի յօդուածին թարգմանութիւնը և խաղաղութեան Միութեան նկատմամբ մեր գրած խմբագրականը։ Մր. Սթայնի մի ուրիշ յօդուածն ալ երեցած է յիշեալ ամսաթիւերի մէջ, Հայկական խնդրոյն վրայօք, զոր ԱՐԱՐԱՏի յաջորդ թուով պիտի ներկայեմք մեր ընթերցողաց։

ԲԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
ԵՒ
ՄԵԾ ՀԱՆԴԵՆ
Ի Յիշատակ
ՄԻՈՑ ՎԱՊԻՆԱՆՑ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ

Ազգային սոյն անմոռանալի յիշատակը մի փառաւոր հանգիստ պիտի տնուի Եարաթ, Մարտ 7, ժամը 8ին երեկոյեան, յիսթըրն Սթար Հօլ, անկիւն Յրդ Ալլընիւ և 7րդ փողոց։

Կը հրաւիրուին ամէն ազգայնք պատուել անմահ Զօրավարին յիշաւ տակը և վայելել սոյն շքեղ երեկոյթը։ Կազմուեանք ձրի պիտի ծառայուին։

Մտից տոմարի գինն 25 սենթ, և կ'ստացուի դադարեալութեան պիտի տնուի Եարաթ, Մարտ 7, ժամը 8ին երեկոյեան, յիսթըրն Սթար Հօլ, անկիւն Յրդ Ալլընիւ և 7րդ փողոց։

Ի Դիմաց Եանձնախումբին,
Ե. Ս. ՏԻՆԵՆՆԵ,
Գարաուղար

"The ARABAD"
No. 100 Centre Street, New York.
ADVERTISING RATES.
Inches. 1 Month. 3 Months. 1 Year.
1 \$ 2.00 \$ 5.00 \$15.00
2 3.50 8.00 25.00
3 5.00 11.00 35.00
4 6.00 14.00 45.00
5 7.00 17.00 55.00
6 8.00 20.00 65.00
7 9.00 23.00 75.00
8 10.00 26.00 85.00
1 Col. 11.00 29.00 95.00
1 Col. 20.00 55.00 180.00
Per Line (Agate) 15 cents each issue.
The above prices are for the first and last pages only. Ten per cent additional for the third page, next to reading matter.

If YOU WISH
to Advertise
Anything
Anywhere
AT Any time
WRITE TO
GEO. P. ROWELL & Co.
No. 10 Spruce Street,
NEW YORK.

Ս. ՕՀՆԵՆՍԵԱՆ.
Արեւելեան և Տեղական Նպարեղեններ.
59 Ուաշինկթըն և 216 Ելտրիք փողոց.
Սոյն Խանութներու մէջ կը վաճառուի մասնաւոր խնամք Կ. Պօլսէ բերուած Արեւելեան ամէն տեսակ Նպարեղենք, Աղձեղէններ, ընտիր Պտուղներ, Ամերիկացոց ախորժիկի ու շուէրի արժանի Անուշիղէնք, զանազան ընտիր գինիներ ու օղիներ, Նաեւ Տաճկական Գաւառի առաջին կարգի ծխախոտէ շինուած սիկարէթներ.
Եանձնարարութիւնք ժամանակին խնամք կը կատարուին, և յաճախողներն գոհացնելու համար ամէն ջանք ի դուրս կը դրուին։

Mrs. Winslow's
Soothing Syrup.
ՏԻՎ. ՈՒԿԵՆՆԻՍ ՈՂՈՒԹԻՉ ՕՇԱՐԱԿԸ.
Յիսուս տարիներէ աւելի է որ Տիկին Ուինսլօ Ուոքըն Օշարակը միլիոնաւոր մարդիկ կը դուրստուէ իրենց զաւակաց ախտայ հաւանք ժամանակ. Գիշերները կը խնայարուիք և հանգստութիւնիդ կը վրդովուի ախտայ հանգուցաւէ հիւանդ, տառապող և լացող զաւակէ մը, եթէ այդպէս է. անմիջապէս Ակույ Հանող Մանկանց Համար «Տիկին Ուինսլօ Ուոքըն Օշարակ» էն շիւ մը առէք, Սորա արժէքը անհամար է. Խեղճ պըզտի տառապեալին անմիջապէս դարման մը պիտի ըլլայ։ Մայրեր, ասոր վրայ կրնաք ապաւինիլ. բնաւ սխալ չի կայ։ Կը բժշկէ փորքուծութիւն, կը կանոնաւորէ Ստամոքքը և Աղիքները, կը բժշկէ Աղեաց Խիթը, կը կաղցնէ Լինտըրը, կը նորոգէ զորքեցնէ բորբոքումն, և ամբողջ կազմութեան կը կազդուրէ և կը զօրացունէ։ Ակույ Հանող մանկանց համար «Տիկին Ուինսլօ Ուոքըն Օշարակ», ճաշակի հաճելի և Երեսնաւ Նահանգաց մէջ ամէնէն հին և ամենալաւ բժշկութիւն և անուշիղենքէն մէկուն գեղազիրն է, և կը ծախուի աշխարհիս ամէն գեղաւորքներու քով։ Իւրաքանչիւր շիւ շի գինն է քսան և հինգ սենթ, և կը գտնուի միայն.
"Mrs. Winslow's Soothing Syrup."

ԱՉԻ
Հ. ԷԿԻՆՆԵԱՆ, Հայերէն միակ
Տպագրիչ ի Միացեալ Նահանգս, պատիւ ունի ծանուցանել թէ յանձն կ'առնէ տպագրել ամէն տեսակ Հայերէն և Անգլ. գործ մեծ կամ փոքր քանակութեամբ Տպագրութեան մաքրութիւնն և աժանութիւնն կարելի չէ գերազանցել. իր Նիւ Եօքսի մէջ ձուլել տուած Հայերէն ընտիր տառերն բաւական են մեծկալ հասարակ տպագրելու. Գիրք, տետր կամ ո'ր է տպագրելի բան ունեցող ազգայնոց ուղարկութիւնն կը հրաւիրուի այս մասին։

B. H. TASHJIAN & Co.,
100 Centre St.,
New York.
BOOK AND PAMPHLET BINDERS
CLOTH & PAPER BINDINGS,
MAGAZINES.
Reviews and Newspapers bound and mailed. Estimates furnished cheerfully.
— ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆՆԵԱՆ —